Մենեմշյան Ա. Ռ.
Նոր մեդիայի և հաղորդակցության
ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. փոստ՝ a.menemshyan@ysu.am

ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ. ՄԵԴԻԱԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Բանալի բառեր - *քառօրյա պատերազմ, ապրիլյան «բլից կրիգ», մեդիաարշաւանք, քարոզչություն, մանիպուլյացիա*

2016-ի ապրիլից հետո հայկական և արտասահմանյան մեդիաբառաֆոնդում ավելացավ «քառօրյա պատերազմ» եզրույթը, որը հրապարակումների նյութ դարձավ ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան մամուլում:

Լայնորեն լուսաբանվելով, սակայն, ապրիլյան «բլից կրիգը» այդպես էլ չստացավ հստակ գնահատական: Չնայած տեղական և միջազգային տարբեր կառույցների կողմից բազմաթիվ արձագանքներին՝ դեռևս պարզ չէ՝ ի վերջո, շրջանառվող վարկածներից որն է իրականը. ի՞նչ նպատակ էր հետապնդում Ադրբեջանը, և, որ ամենակարևորն է, ի՞նչ հետևանքներ և շարունակություն կարող է ունենալ 2016-ի ապրիլը: Առկախ են մնում նաև մեր և ադրբեջանական կողմի զինտեխնիկայով հագեցվածության, բանակների պատրաստվածության աստիճանի, տարածքային առաջխաղացման և մի շարք այլ հարցեր: Դրանց պատասխանները կարող է տալ խնդիրը լուսաբանող հոդվածների քննությունը, ինչը կփորձենք մասամբ իրականացնել մեր հոդվածում:

1. Հայաստանյան պարբերականների արձագանքը

Տեղական պարբերականները ապրիլի սկզբին և դրան հաջորդող ամիսներին թեմային անդրադարձել են հազարավոր անգամներ: Բաց թողնելով պատերազմի օրերի՝ ամենօրյա տեղեկատվա-

կան բնույթի արձագանքները՝ փաստենք, որ պարբերականներից շատերը նախ հիշեցին նման հարձակման նախադեպը. հայր Ալիևը նման արկածախնդրության դիմել է դեռևս 1993 թվականի դեկտեմբերին, ընդ որում՝ սկզբում հաջողել է՝ ունենալով շոշափելի առաջխաղացում ճակատի տարբեր հատվածներում, ապա ստիպված է եղել դիմել զինադադարի խնդրանքով, ինչն էլ ամրագրվել է 1994 թ. մայիսի 12-ի Բիշքեկի համաձայնագրով[1]:

Տեղական պարբերականները բազմիցս անդրադարձան հատկապես մեր և ադրբեջանցիների կողմից օգտագործված զինտեխնիկայի խնդրին. եղան բազմաթիվ հրապարակումներ, որոնք անգամ երկրի նախագահի մակարդակով հասկանալի պատճառներով հիմնականում գերագնահատում էին թշնամու հնարավորությունները և թերագնահատում մերը[2]: Այս պլանում նաև ընդգծված կերպով շեշտադրվում էին մեր զինվորների ոգին, մարտունակության մակարդակը՝ ներքին լսարանի համար անընդհատ և հետևողականորեն շրջանառելով հայրանասիրության գաղափարաբանությունը: Բերվում էին օրինակներ, որոնք փաստում էին հայ զինվորի և հազարավոր կամավորների արիությունն ու հանուն հայրենիքի կյանքը զոհաբերելու պատրաստակամությունը: Ադրբեջանական կողմի դեպքում, հակառակը, խոսվում էր նրանց շրջանում ոգու բացակայության մասին, բոլոր հաջողությունները վերագրվում էին առաջին գծերում հատուկ նշանակության ջոկատայինների ներկայությանը: Հասկանալի է, որ այս ամենն ուներ իր պատճառները, որոնց անվտանգության նկատառումներով չարժե անդրադառնալ:

Ապրիլյան պատերազմի մասին տեղական մեդիապատկերացումների ձևավորման առումով հատկապես հետաքրքրական է քառօրյա պատերազմի ՊՆ վերլուծությունը[3], որը կարծես վերջակետ

---

[1] «Դրօշակ», Քառօրյա պատերազմ. պատճառների եւ մեղավորների փնտրտուք, 18 ապրիլի, 2016, http://www.yerkir.am/news/view/105257.html:

[2] **Սարգսյան.** Ադրբեջանին զենք մատակարարելը չի խանգարում ՌԴ-ի և Հայաստանի բարեկամությանը, 06.04.2016, http://armeniasputnik.am/armenia/20160406/2821846.html:

[3] **Հովհաննիսյան Ա.,** Ապրիլյան չորսօրյա պատերազմի վերլուծություն, 15.04.2016, http://yerkirmedia.am/social/qarorya-paterazm-verlucutyun-arcrun-hovhannisyan/:

դրեց հայկական մեդիամիջավայրում մի շարք վարկածների շրջանառությանը, ուրվագծեց պատերազմի հիմնական պատկերը, ինչպես նաև դարձավ հետագա հրապարակումների հիմնական առանցքը: Պատերազմին առնչվող մեդիահոսքերը այդուհետ հիմնականում շրջանառվում էին պաշտպանության նախարարի մամուլի քարտուղարի արտահայտած մտքերի շրջանակներում. օրինակ՝ մերժվեց մինչ այդ շրջանառվող «հետախուզական պատերազմի» վարկածը, որոշակի հստակություն մտցվեց զինտեխնիկային առնչվող հարցերում (համենայնդեպս պակասեցին շահարկումները այդ թեմայով), հստակ դարձավ ադրբեջանական կողմի հարձակման պատճառների վերաբերյալ ՊՆ տեսակետը, շրջանառության մեջ դրվեցին քարոզչական առումով կարևոր թեզեր՝ «Ադրբեջանական հասարակության համար այս պատերազմը հայրենական պատերազմ չէր», «Ադրբեջանական մամուլը և հասարակությունը լիովին փակ են. չկա ինքնաքննադատություն և սխալների ընդունում», «Հայկական բանակը, որոշակի տեխնիկական հարցերում զիջելով ադրբեջանական կողմին, գերազանցում է հաղթանակ ապահովող երկու կարևորագույն գործոնով. զորքերի և ռեզերվների մարտական բարձր ոգին և կառավարման բարձր մակարդակը»[4]:

2. Արտերկրի մեդիաարձագանքները քառօրյա պատերազմին

Արտասահմանյան մամուլը ևս անդրադարձավ խնդրին՝ հիմնականում պահելով որոշակի չեզոքություն: Այդուհանդերձ, եղան պարբերականներ, որոնք առիթը բաց չթողեցին հիշեցնելու համար խնդրի պատմությունը և իրադարձությունները լուսաբանեցին որոշակի ուղղվածությամբ: Մասնավորապես ֆրանսիական «Le Monde» թերթը, որը Ղարաբաղյան խնդրի լուսաբանման հարցում հակամարտության հենց առաջին օրերից փորձել է լինել անկողմնակալ՝ խուսափելով վերլուծական նյութերից, տալով հիմնականում

[4] **Հովհաննիսյան Ա.,** Ապրիլյան չորսօրյա պատերազմի վերլուծություն, 15.04.2016, http://yerkirmedia.am/social/qarorya-paterazm-verlucutyun-arcrun-hovhannisyan/

չոր տեղեկատվություն[5], այս անգամ տպագրել էր ծավալուն հոդված, որտեղ, ի թիվս ադրբեջանական կողմի տեսակետների, ներկայացված է նաև Լուվենի համալսարանի պրոֆեսոր, իրավաբան Պիեր դ'Արժանի մոտեցումը: Նա գտնում է, որ «երբ որևէ երկրի մարզը հռչակում է իր անկախությունը, դա կարող է դեմ լինել տվյալ երկրի սահմանադրությանը, բայց չկա միջազգային իրավունքի որևէ կանոն, որը կարգելի այդ անկախության հռչակումը»[6]: Նույն հոդվածում բերված է նաև Լիլի համալսարանից իրավաբանության մեկ այլ պրոֆեսորի՝ Կրեման Պոնզեկի տեսակետը, որը չնայած պնդում է, որ Ղարաբաղի անկախացման գործընթացը պետք է ընթանա միայն Մինսկի ձևաչափով, այդուհանդերձ ավելացնում է, որ «վերիրավական էթիկայի տեսանկյունից հայերը այլ քաղաքակրթության կրող են ադրբեջանցիների համեմատությամբ և արժանի են իրենց անկախությանը»[7]: Հոդվածը ֆրանսիացի պատգամավոր Ֆրանսուա Ռոշեբլուանի անունից նաև հիշեցնում է, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը արդեն քսանչորս տարի է, ինչ ունի արդյունավետ գործող խորհրդարան և կառավարություն»[8]: Հոդվածում հնչած պրոհայկական մտքերը հաստատվում են ղարաբաղյան խաղաղ բնակավայրերի, մշակութային արժեքների ավերածությունների, հայկական եկեղեցիների, Շուշիի պատմության թանգարանի, հայ կամավորների և զինվորների լուսանկարներով:

Իհարկե, ֆրանսիական մամուլը միակարծիք չէր նման մոտեցման մեջ. օրինակ՝ «France 24»-ը, ներկայացնելով իրերի դրվածքը, Ղարաբաղի հայերին անվանում էր «անջատողականներ»՝ որոշակի տրամադրություն ստեղծելով[9]:

---

[5] **Մեսեմշյան Ա.,** «Le Monde»-ը և հայ իրականությունը, Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 149:

[6] **Minassian G.,** Le Haut-Karabakh peut-il devenir indépendant?, http://www.lemonde.fr/idees/article/2016/05/05/le-haut-karabakh-peut-il-devenir-independant_4914373_3232.html

[7] Նույն տեղում:

[8] Նույն տեղում:

[9] Cessez-le feu au Haut-Karabakh, après quatrejours de combats qui ont fait 64 morts, http://www.france24.com/fr/20160405-haut-karabakh-seize-soldats-azerbaidjan-tues-armenie-cessez-feu

Ապրիլի 2-5-ը ընթացած պատերազմին անդրադարձան նաև արտասահմանյան վերլուծական կենտրոններն ու միջազգային կազմակերպությունները: Վերջիններս նույնպես ընդհանուր առմամբ փորձում էին հնարավորինս չեզոք դիրք գրավել՝ ներկայացնելով թե՛ հայկական և թե՛ ադրբեջանական տեսակետները, չնայած մի շարք անկախ փորձագետներ դեռևս պատերազմի ընթացքում փաստեցին, որ անուղղակի ապացույցներն ու տրամաբանությունը վկայում են՝ Լեռնային Ղարաբաղում անկայունության պատճառն Ադրբեջանն է: Մասնավորապես բրիտանական «Chatham House» վերլուծական կենտրոնը համադրել էր փաստերը և եկել եզրահանգման. նրա համար կասկածելի էր թվում լարվածության օրը, որը համընկավ 23 տարի առաջ Քելբաջարի «անկման հուզական օրվա» հետ: Կենտրոնը համադրում է նաև Ադրբեջանի կողմից զինվորական տեխնիկայի, օդային ուժերի և հրթիռների ողջ ծավալով կիրառման փաստը և եզրակացնում, որ լարվածությունը հրահրված էր Ադրբեջանի կողմից և չէր կարող պատահական լինել: Կենտրոնի վերլուծաբան Լորենս Բրոենսը հետաքրքրական է համարում նաև այն հանգամանքը, որ լարվածության նախօրեին նախագահներից և ոչ մեկը չի եղել երկրում, ասել է թե՝ չի եղել վերահսկողություն (պարբերությունը վերնագրված է «Առանց վերահսկողության» («No control»))[10], կարելի է ենթադրել՝ չի եղել նաև պատասխանատվություն:

Որոշ վերլուծաբաններ ավելի հեռուն գնացին իրենց վերլուծություններում. նրանք կարծիք հայտնեցին, որ նավթի գնի անկումն ու ազգային արժույթի արժեզրկումը խորացրին Ադրբեջանում սոցիալ-տնտեսական խնդիրները, ինչը հանգեցրեց ժողովրդի դժգոհությանը: Ուստի ղեկավարությանն անհրաժեշտ էր թարմացնել «Ղարաբաղյան գործոնը»՝ ստեղծելով տպավորություն, թե գումարները ծախսվել են «պաշտպանության» կազմակերպման, զինտեխնի-

[10] **Broers L.,** Global Powers Scramble to Contain Neglected Armenian-Azerbaijani Conflict, 4 April, 2016,
https://www.chathamhouse.org/expert/comment/global-powers-scramble-contain-neglected-armenian-azerbaijani-conflict

կայի ձեռքբերման համար, ինչպես նաև ուղղել ժողովրդի ուշադրությունը «հայ թշնամու վրա»՝ շեղելով նրան ներքին խնդիրներից[11]:

Հետաքրքրական է, որ այս վարկածը չէր շրջանառվում քառօրյա պատերազմի ՊՆ վերլուծության մեջ: Հայկական կողմի տեսակետը Ադրբեջանի կողմից պատերազմի նախաձեռնության հարցի վերաբերյալ հետևյալն էր. «Անցած տարիների ընթացքում Ադրբեջանը ձեռք էր բերել մեծաքանակ նորագույն զինատեսակներ, դրանք իրենց մեծ վստահություն էին ներշնչել, ընդհուպ, որ դրանք կարող են իրենց հաղթանակ ապահովել: Միաժամանակ նրանք գիտեին, որ հայկական կողմը ևս բավականին ձեռքբերումներ ունի, սակայն դրանց զգալի մասը դեռևս ճանապարհին է: Եթե սրան հավելենք, որ ադրբեջանական բանակի ծախսերը շեշտակիորեն կրճատվել էին, ապա կարելի է ենթադրել, որ, ըստ իրավիճակի, ճիշտ ժամանակն էր փորձելու բլիցկրիգ (արագ պատերազմ) անել»[12]:

Շարունակելով քառօրյա պատերազմի հրահրման մեղիավարկածները՝ հիշատակենք նաև «Le Courrierde Russie»-ի տեսակետը. պարբերականը գտնում է, որ պատերազմը կարող էր վերսկսել միայն նա, ով տանուլ էր տվել նախորդը, մինչդեռ 1992-1994 թթ. հակամարտությունը լուծվել էր Հայաստանի հաղթանակով: «Լարվածության ուժգնացումը սահմանին Ադրբեջանի համար լավագույն միջոցներից է աշխարհին հիշեցնելու Լեռնային Ղարաբաղի սառեցված խնդրի մասին»[13],- կարծում է պարբերականը՝ վկայակոչելով Բաքվի պաշտոնական ռազմատենչ հռետորաբանությունը և այն, որ Ադրբեջանի ռազմական բյուջեն գերազանցում է ՀՀ ամբողջ բյուջեն:

---

[11] **Voronkova A.,** New ceasefire in Nagorno-Karabakh: no cause for optimism,18 April 2016, http://www.peeep.us/3536d006.

[12] **Հովհաննիսյան Ա.,** Ապրիլյան չորսօրյա պատերազմի վերլուծություն, 15.04.2016, http://yerkirmedia.am/social/qarorya-paterazm-verlucutyun-arcrun-hovhannisyan/:

[13] **Breen J.,** Haut-Karabagh: pourquoi la guerre n'aura pas lieu, 12 avril 2016, http://www.lecourrierderussie.com/international/2016/04/haut-karabagh-guerre/.

Ամփոփում

Թեմային առնչվող տեղական և արտասահմանյան մեդիաարձագանքների համադրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ապրիլյան պատերազմը հրահրված էր Ադրբեջանի կողմից: Այն կարելի է որակել իբրև հարմար պահի օգտագործում Ադրբեջանի համար զինտեխնիկայի առավել հագեցվածության ժամանակահատվածում, ինչպես նաև փորձ՝ շեղելու սեփական հասարակությանը: Որքանով նման արյունալի հնարքներ հետագայում կկիրառի մեր «հարևանը», դժվար է ասել, սակայն հասկանալի է, որ դրանք չեն լինի մոտ ժամանակահատվածում: Նախ՝ տեխնիկայի մեծաթիվ կուրուստը դա թույլ չի տա, և հետո՝ հասարակությանը մանիպուլացիայի ենթարկվելու կարիք այլևս չկա. ծախսերն այլևս արդարացված են:

Արդարացի լինելու համար պետք է փաստենք, որ առավել հիմնավոր եզրահանգման համար ավելի խորքային, ծավալուն, առավել լայն աշխարհագրությամբ վերլուծություններ են անհրաժեշտ, ինչը հնարավոր չէր անել փոքր հոդվածի շրջանակներում:

РЕЗЮМЕ

Менемшян А. Р.

ЧЕТЫРЕХДНЕВНАЯ ВОЙНА: МЕДИАОТЗЫВЫ

Ключевые слова: *четырехдневная война, апрельский "Блицкриг", обзор СМИ, пропаганда, манипуляция*

После апреля 2016-го года в армянских и зарубежных СМИ был введен в обиход термин «четырехдневная война», который стал материалом для многих публикаций как в местной, так и зарубежной прессе. Местные медиапотоки, связанные с войной, в основном циркулировали в рамках высказываний пресс-секретаря министра обороны. Зарубежная пресса же старалась сохранить нейтралитет. Тем не менее, некоторые

средства массовой информации не упускали случая для того, чтобы напомнить историю вопроса, и освещали события с определенной направленностью. Сочетание реакций местных и зарубежных медиа позволяет сделать вывод о том, что апрельская война была спровоцирована Азербайджаном. Это можно охарактеризовать как использование подходящего момента, в период, когда Азербайджан был переоснащен военной техникой, а также как попытку отвлечь азербайджанское общество.

SUMMARY

Menemshyan A. R.

"FOUR-DAY WAR": MEDIAREVIEWS

Key words: *A four-day war, April Blitzkrieg, Media Review, propaganda, manipulation*

After April 2016, the term "four-day war" was added to the Armenian and foreign media wordstock, which became a topic of publications both in local and foreign press. Local media publications concerning the war were mostly based on and reflected the views expressed by the Defence Minister's press secretary. The foreign press tried to keep some neutrality. However, there were newspapers, that did not miss the opportunity to return to the history of the problem and the coverage of the events offered by them was directed to a certain path. The combination of local and foreign media reviews allows us to conclude that the April war was instigated by Azerbaijan. It can be characterized as an attempt by Azerbaijan to divert the attention of its own society using their fully equipped military arsenal, catching the opportunity of the moment.